ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Զեկույցը պատրաստվել է հանրային ֆինանսների կառավարման միջազգային խորհրդատու Վարդան Արամյանի գլխավորած տնտեսագետների մասնագիտական խմբի կողմից

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *3*

1. Արցախի տնտեսությունը *7*

2. Տնտեսական Կորուստների Գնահատումը և Գնահատման Մեթոդները *12*

2.1. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ I 12

(Ամսեկան ՀՆԱ ճեղքի գնահատում) 12

2.2. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ II 14

(ՀՆԱ ճեղքի գնահատումն ըստ ճյուղային կառուցվածքի) 14

2.3. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ III 16

(ՀՆԱ ճեղքի գնահատում՝ Միկրոտվյալներից Մակրոտվյալների անցմամբ) 16

2.4. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ IV 17

(ՀՆԱ ճեղքի գնահատում էկոնոմետրիկ մոդելներով) 17

2.5. Արցախի Համախառն Ներքին Արդյունքի կորուստները 18

(4 մոտեցումների ամփոփում) 18

3. ՀՆԱ կորստի առաջացրած առաջնային սոցիալական ծախքերը (Գործազրկություն, սոցիալական բարեկեցության անկում) *20*

4. ՀՆԱ կորստի հետևանքով բյուջեի ծանրաբեռնվածության աճը *21*

ԱՄՓՈՓՈՒՄ *24*

Հավելված. SVAR մոդելի նկարագիրը և արդյունքները *25*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արցախը գտնվում է շրջափակման մեջ՝ 2022թ-ի դեկտեմբերի 12-ից. Արտաքին աշխարհի հետ կապող և Արցախի տնտեսությունը սնուցող միակ «Կյանքի Ճանապարհը» փակվել է Ադրբեջանական ինքնահռչակ «Էկո Ակտիվիստների» կողմից: Բացարձակ իրատեսական չէ, որ ըստ խոսքի ազատության և բնապահպանական խնդիրների մասով միջազգային կառույցների գնահատումների, Հայաստանից էապես հետ ընկնող Ադրբեջանի «Էկո Ակտիվիստը» անհանգստացած լինի Հայաստանի բնապահպանական կարգավորումները և նորմերը հայելանման կրիկնօրինակած, ինչպես նաև դեմոկրատական արժեքներով ապրող հասարակություն ունեցող Արցախի բնապահպանական խնդիրներով:

Ավելին, Ադրբեջանը հանքարդյունաբերության ոլորտի միջազգային կազմակերպության «**Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության»** (EITI - Exctractiv Industry Transparency Initiative) պատմության մեջ առաջին երկիրն է եղել, ում կարգավիճակը 2017թ. կասեցվել է և դա արվել է հենց քաղաքացիական հասարակության նկատմամբ Ադրբեջանի ճնշումների, սահմանափակող օրենքների և ուղղիչ գործողություններ չկիրառելու հիմքով[1]: Այդ նույն խնդիրները՝ քաղաքացիական հասարակության նկատմամբ կիրառվող կոշտ սահմանափակումները, հետագայում ևս անփոփոխ են մնացել Ադրբեջանում, ինչի մասին վկայում են նաև այլ մարմինների կողմից տրված գնահատականներ[2]: Շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից Ադրբեջանն իր կարգավորումներով աննախադեպ հետ է մնում Հայաստանից (հետևաբար և Արցախից) նաև «Բնապահպանական արդյունավետության ինդեքսով» (Environmental Performance Index)՝ զբաղեցնելով հեռավոր 104-րդ դիրքը (Հայաստանը՝ 56-րդ)[3]:

Հակառակ Ադրբեջանի, նույն EITI անդամակցության շրջանակներում Հայաստանը դարձել է այն 9 երկրներից մեկը, ում ամենաբարձր գնահատականն է շնորհվել հանքարդյունաբերության ոլորտում միջազգային ստանդարտը ոչ միայն պահպանելու, այլև պահանջները գերազանցելու համար: Բացի այդ, Հայաստանը ստացել է EITI նախագահության հատուկ մրցանակ:

Այս նյութի պատրաստման ժամանակ Արցախի կյանքի ճանապարհը մնում է դեռ փակ, ինչը հանգեցնում է Արցախի թե տնտեսական, թե սոցիալական ծախքերի: Ակնհայտ է, որ կյանքի ճանապարհի փակ լինելը կաթվածահար է անում Արցախի տնտեսությանը, զրկում վերջինիս անհրաժեշտ ռեսուրսների մատակարարումից՝ դարձնելով այն դասական ավտարկիա: Եվ քանի որ Արցախի տնտեսությունը փոքր է, չունի մասշտաբի էֆեկտ և ինքնաբավ չէ, շրջափակման յուրաքանչյուր ավել օրը մուլտիպլիկատիվ էֆեկտով խորացնում է տնտեսական ծախքերը և ուժեղացնում սոցիալական լարվածությունը:

Սույն նյութը պատրաստված է Արցախի կառավարության պատվերով, որտեղ փորձ է արվել գնահատել շրջափակման հետևանքով Արցախի կրած տնտեսական կորուստները: Խնդիրը հնարավորին չափ ճիշտ գնահատելու համար տնտեսագետների թիմը կատարել է մի քանի մոտեցումներով գնահատումներ՝ կիրառելով տարբեր գործիքակազմ (էկոնոմետրիկ ու վիճակագրական գնահատման եղանակներ, ձեռնարկությունների տվյալների վերլուծությամբ ու

---

[1] Հղումը՝ https://eiti.org/countries/azerbaijan?fbclid=IwAR3QocQYX8ud_VHX2OsmPGqBAweAyws0lqpYMqHUBdP_QoXpxqlIsWzd1rw

[2] ԱՄՆ ՄԶԳ/USAID Քաղհասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսում և' իրավական, և' ֆինանսական կենսունակությունը գնահատվել է խոչընդոտվող՝ 6.3 միավորներով (2021թ): Հղումը՝ https://storage.googleapis.com/cso-si-dashboard.appspot.com/Reports/CSOSI-Azerbaijan-2021.pdf?fbclid=IwAR1s5qD8gUm5KtPXjoRhX7pyKz0GXCU475FsvF4m_ENUH478DGqQ_SHIh9c

[3] Հղումը՝ https://epi.yale.edu/epi-results/2022/country/aze

մակրոտնտեսական տվյալներին փոխկապակցման մեթոդներ, ուղղակի ՀՆԱ կառուցվածքի միտումների և հիմնարարների տվյալների հիման վրա փորձագիտական գնահատումներ), որպեսզի էլ ավելի անխոցելի դարձնի ստացված արդյունքները: Ընդ որում գնահատված տնտեսական ծախքերը բերվել են օրականի, քանի որ հստակ չէ, թե Ադրբեջանի հումանիտար ճգնաժամ ստեղծող գործողությունները որքան կտևեն կամ ապագայում կկրկնվեն, թե ոչ: Տնտեսական ծախքերի գնահատումից զատ, փորձ է արվել գնահատել նաև սոցիալական լրացուցիչ ծախքերի բեռը, որը տնտեսական կառուցակարգերի փլուզման արդյունքում անխուսափելիորեն առաջանալու է՝ գործազրկության և անձանց եկամտի կորստի հանգամանքներով պայմանավորված: Ի լրումն դրան, գնահատվել է նաև բյուջետային ազդեցությունը, քանի որ բյուջեն մի կողմից զրկվելու է հարկերից և դա՝ Հայաստանից ստացվող ֆինանսական միջոցների անփոփոխ ծավալների պայմաններում հանգեցնելու է բյուջետային որոշ ծախսերի պարտադրված չկատարման, մյուս կողմից ավելանալու է ծախսերի նկատմամբ պահանջը՝ հասցված վնասները մեղմելու կամ ապագայում նմանատիպ ցնցումներին դիմակայելու հրամայականից ելնելով:

Արդյունքները ցույց են տալիս, որ շրջափակման հետևանքով Արցախի ընդհանուր ֆինանսա-տնտեսական կորուստները (այդ թվում՝ հարկերի նվազումը և լրացուցիչ առաջնային մինիմալ սոցիալական ծախսերը) կազմում են **օրական նվազագույնը 651 մլն դրամ (1.6 մլն ԱՄՆ դոլար)**[4]: Այստեղ պետք է հաշվի առնել, որ ֆինանսատնտեսական ծախքերի կամ կորուստների գնահատականն իր մեջ ներառում է բոլոր տեսակի առաջացող ծախքերը, այդ թվում նաև հասարակության սպառման (բարեկեցության) կորուստը, (այդ ծախքերի մի մասը ՀՆԱ չեն, բայց հասարակության սպառում են)[5]: Եթե այդ ցուցանիշը տարածենք շրջափակման ամբողջ ժամանակահատվածի վրա, որն արդեն իսկ գերազանցում է 2 ամիսը, ապա ստացվում է, որ **Արցախին արդեն իսկ պատճառվել է շուրջ 52 մլրդ դրամի (132 մլն ԱՄՆ դոլար) չափով տնտեսական վնաս**[6]: Պետք է նշել, որ տնտեսության տոտալ փակման և ձեռնարկությունների գործունեության դադարի արդյունքում **առնվազն 16.2 հազար մարդ կդառնա գործազուրկ** (4 մեթոդներով գնահատականների միջինացված ցուցանիշ), որոնց նվազագույն կենսական գոյության պահպանման համար անհրաժեշտ ֆինանսական փոխհատուցումները 68 000 դրամի չափով ներառված է վերը ներկայացված հաշվարկներում, որպես կառավարության ուսերին լրացուցիչ ֆինանսական բեռ[7]: Օրական կտրվածքով այդ ֆինանսական բեռը գնահատված է **շուրջ**

---

[4] Ցուցանիշը 4 տարբեր մեթոդներով ստացված գնահատականների միջին կշռված արժեքն է: Նշենք նաև, որ տվյալ ցուցանիշն իր մեջ ներառում է փաստացի և **պոտենցիալ** վնասները (այն, ինչ Արցախը վաղը կունենար, եթե տնտեսական կյանքի դադար այսօր չլիներ (բացթողնված օգուտ) և այն, ինչ Արցախը վաղն անխուսափելիորեն ունենալու է այսօրվա շրջափակման մեջ գտնվելու պատճառով (լագային վնաս)): Այսպես օրինակ դեկտեմբերի վերջին փաստացի գործազուրկների թվաքանակն այդքան էլ մեծ չէ, քանի որ ըստ աշխատանքային օրենսգրքի պահանջների նրանք կարող են գործից ազատվել 2 ամիս առաջ գործատուի կողմից նախապես տեղեկացումից հետո: Մինչ այդ մարդիկ ֆորմալ աշխատանքի մեջ են (համարվում են զբաղված, սակայն կամ հարկադիր պարապուրդում են կամ արձակուրդում), բայց փաստացի չեն աշխատում:

[5] Այսպես օրինակ, երբ անձը ստանում է թոշակ, որն ուղղվում է ներմուծված ապրանք-ծառայություն ձեռք բերելու վրա, երկու հոսքերն էլ ՀՆԱ չեն, բայց հասարակության սպառում են:

[6] Հաշվարկված է 80 օրվա համար և 1 գործազուրկին 68 000 ՀՀ դրամ գործազրկության նպաստների հաշվարկով: Ընդ որում «տնտեսական վնաս» հասկացությունը իր մեջ ամբողջացնում է բոլոր տեսակի ֆինանսական և տնտեսական կորուստները՝ ներառյալ բյուջեի հարկերի կրճատման հետևանքով ծախսերի չկատարումը և սոցիալական լրացուցիչ փոխհատուցումների բեռը:

[7] Ընդ որում, Արցախը չունի այդ ֆինանսական բեռի ծածկման սեփական միջոցներ և այլ հավասար պայմաններում դա հանգեցնելու է Արցախի համար նոր պարտքի ձևավորման և պարտքային բեռի էլ ավելի խորացման:

36 մլն դրամ (92 հազար ԱՄՆ դոլար), իսկ շրջափակման ողջ ընթացքում (հաշվարկած 80 օրերի հաշվարկով)՝ շուրջ 2.9 մլրդ դրամ **(7,3 մլն ԱՄՆ դոլար)** :

Պետք է նաև հաշվի առնել, որ քանի դեռ անձն աշխատում էր և ստանում աշխատավարձ, որն անգամներով ավել էր քան 68 000 դրամի չափով տրվող գործազրկության փոխհատուցումը, ապա այստեղ առաջանում է նաև **սոցիալական բարեկեցության կորուստ**[8]: Ուստի սոցիալական բարեկեցության կորուստն էլ հաշվի առնելով Արցախի օրական հաշվով սոցիալ-տնտեսական կորուստը հաշվարկված է օրական շուրջ **752 մլն դրամ (1.9 մլն ԱՄՆ դոլար),** իսկ ճանապարհի փակման օրվանից մինչ այժմ կուտակային՝ **շուրջ 60.1 մլրդ դրամ (152 մլն ԱՄՆ դոլար):**

Շրջափակման հետևանքով տնտեսական համակարգի գործունեության հիմնական ուղղությունների կանգառը նշանակում է նաև **քիչ հարկեր և բյուջետային կորուստ**, որը՝ Հայաստանից ստացվող բյուջետային ֆինանսավորման անփոփոխ ծավալների պայմաններում անխուսափելիորեն բերելու է որոշ ծախսերի պարտադրված չկատարման: Հարկերի կորուստը գնահատված է օրական շուրջ **81 մլն դրամ (204 հազար ԱՄՆ դոլար)**, իսկ շրջափակման ողջ ընթացքում (հաշվարկած 80 օրերի հաշվարկով)՝ շուրջ **6.5 մլրդ դրամ (16.4 մլն ԱՄՆ դոլար):**

Կատարված աշխատանքը և վերոնշյալ թվերը երկու հանգամանք չեն ներառում, որոնք ևս կարևոր է հիշատակել, քանի որ դրանց մասով հաշվարկներն էլ ավելի կվատացնեն ձևավորված ծախքերի պատկեր և որոնց մասով հետագայում ավելի խորքային գնահատումներ կկատարվեն:

1. **Չկատարված անհրաժեշտ ծախսերի արդյունքում արտադրության գործոնների մաշում (փչացում):** Տնտեսագիտությունում ընդունված արտադրության երկու գործոնները՝ մարդկային և ֆիզիկական կապիտալը անհրաժեշտ ծավալի վերականգնողական (սպասարկման) ծախսեր (maintenance cost) չունենալու պարագայում սկսում են մաշվել ավելի արագ՝ հանգեցնելով ապագայում ՀՆԱ ստեղծելու կարողությունների կորստի (ՀՆԱ ներուժային կորուստ): Օրինակ մարդն անհրաժեշտ կալորիայի սնունդ չունենալու և/կամ բժշկական սպասարկում չստանալու պարագայում հյուծվում է, ինչն անդրադառնում է իր աշխատանքի արտադրողականության վրա: Նմանապես արտադրական ենթակառուցվածքների վրա անհրաժեշտ պահպանման ծախսեր չլինելու դեպքում հաստոցը, սարքավորումը կամ ճանապարհը փչանում են և ապագայում պահանջելու են շատ ավելի մեծ ծավալի կապիտալ ներդրումներ՝ կորցվածը վերականգնելու համար: Այսինքն, տնտեսությունում դիտվում է մարդկային և ֆիզիկական կապիտալի պաշարների նվազում:

*Այս մասը դեռևս կատարված վարժությունում բացակայում է, ուստի միանշանակ կարելի է պնդել, որ օր օրի շրջափակման ձգձգումը հանգեցնում է լրացուցիչ **վերականգնողական ծախքերի**, որոնք ապագայում կրելու է Արցախի տնտեսությունը՝ հանգեցնելով վերը ներկայացված գնահատականների էապես մեծացման:*

2. **Ապագայում նմանատիպ ցնցումներից խուսափելու համար բուֆերների ստեղծում:** Արցախի վերջին երկու տարվա փորձը ցույց է տալիս, որ Ադրբեջանը պարբերաբար Արցախի տնտեսական կյանքի նկատմամբ ոտնձգություններ է անում՝ գազի, էլեկտրաէներգիայի, հեռահաղորդակցության և վերջերս նաև կենսական նշանակության ճանապարհի փակման միջոցով: Սա մեծ

[8] Սոցիալական բարեկեցության կորուստը, երբ անձն ունակ է բարձր եկամուտների հաշվին իր և իր ընտանիքի անդամների համար ապահովել լրացուցիչ ապրանքների և ծառայությունների գնում, որոնց որոշ մասն էլ՝ ներմուծման միջոցով: Հաշվարկների համար օգտագործվել է 2022թ.-ի Արցախի միջին աշխատավարձի ցուցանիշը՝ 255,8 հազար դրամ:

հավանականությամբ էպիզոդիկ շարունակվելու է նաև ապագայում, քանի դեռ Արցախի հարցը քննարկման փուլում է: Ուստի այսօր իսկ անհրաժեշտ է ձևավորել բուֆերներ, որոնք նմանատիպ դեպքերում հնարավորություն կտան նվազագույնի հասցնել Արցախի հասարակության սոցիալական և տնտեսական ծախքերը: Որպես այդպիսի ծախսերի ուղղություններ կարող են հանդիսանալ էներգիայի լրացուցիչ այլընտրանքային աղբյուրների ստեղծումը, առաջին անհրաժեշտության պարենային պաշարների ձևավորումը և դրանց պահպանման համար անհրաժեշտ պահեստների կառուցումը, վառելիքային պաշարների ձևավորումը և դրանց պահուստավորման համար նոր ենթակառուցվածքներ ստեղծումը, առաջին անհրաժեշտության դեղորայքային պաշարների ձևավորումը և դրանց անվտանգ պահպանման համար անհրաժեշտ պահոցների ստեղծումը և այլն:

Ակնհայտ է, որ վերջինս պահանջելու է զգալի ֆինանսական ծախսեր, որոնք կարող են հասնել նույնիսկ հարյուրավոր միլիոն դոլարների, սակայն այս պահին դրանք ևս գնահատված չեն և ներառված չեն վերոնշյալ ցուցանիշներում:

Հետագա բաժիններում՝ նյութը կառուցված է հետևյալ տրամաբանությամբ. Բաժին 2-ում ներկայացված է Արցախի տնտեսական պատկերը, դինամիկան և կորուստների գնահատման մեթոդների հակիրճ նկարագրությունը, որից ընթերցողն ընդհանուր գծերով պատկերացում կկազմի, թե ինչ է արված վերջնական գնահատականներ ստանալու համար: Հետագա 3-ից 6-րդ բաժիններում մանրամասնեցված է յուրաքանչյուր մեթոդի տրամաբանությունն ու մոտեցումները, օգտագործված թվային բազան և գնահատման արդյունքների մեկնաբանությունները: 7-րդ բաժնում ներկայացվում է բոլոր 4 մեթոդներով կատարված գնահատումների ամփոփումը և ստացված միջին ցուցանիշը: 8-րդ և 9-րդ բաժիններում ներկայացվում է լրացուցիչ սոցիալական և բյուջետային կորուստների գնահատումները, իսկ 10-րդ բաժնում՝ վերջնական ամփոփված է կատարված աշխատանքի ամբողջական արդյունքները:

1. Արցախի տնտեսությունը

Այս բաժնում հակիրճ ներկայացված են Արցախի տնտեսությունը բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները և դրանց դինամիկան վերջին մի քանի տարիներին, որտեղից ընթերցողը կարող է ընդհանուր պատկերացում կազմել Արցախի տնտեսական կառուցվածքի, զարգացումների և ներկայիս վիճակի մասին:

Նախապատերազմյան ժամանակաշրջանում Արցախի Հանրապետության տնտեսությունը զարգանում էր բավական բարձր տեմպերով, սակայն պատերազմի հետևանքով տնտեսությունը երկու տարի անընդմեջ անկում ապրեց: Արցախի տնտեսությունը մինչև պատերազմն ընկած ժամանակահատվածում՝ 2015-2019 թվականներին ունեցել է միջին տարեկան երկնիշ տնտեսական աճ՝ շուրջ 11.2%: Ընդ որում, 2017-2019թթ. տնտեսական աճն էլ ավելի բարձր է եղել՝ միջինում կազմելով տարեկան 12.6%: Դա հիմնականում բացատրվում է Արցախի տնտեսության ոչ մեծ չափերով. Ըստ էության, Արցախի տնտեսությունը Հայաստանի տնտեսության հետ ունի մեծ ինտեգրվածություն և ՀՀ տնտեսական զարգացումները ավելի խորքային արձագանք են գտնում Արցախի տնտեսությունում[9]: Սակայն, 2020 թվականից սկսած, կրելով նաև պատերազմի աղետալի հետևանքները, Արցախի տնտեսությունը երկու տարի անընդմեջ անկում է ապրել, որի տեմպը կազմել է տարեկան միջին հաշվով 17.6%:

Արցախի տնտեսության անկմանը ամենամեծ նպաստումն ունեցել են արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերը՝ ապահովելով 17,6% անկման ցուցանիշի 13,0 տոկոսային կետը: 2020-2021թթ միջին հաշվով 17,6% անկման 9,5 տոկոսային կետը պայմանավորված է եղել արդյունաբերության ճյուղի անկմամբ, իսկ 3,5 տոկոսային կետը՝ գյուղատնտեսության ճյուղի, ինչը բացատրվում է հիմնականում Արցախի տնտեսական տարածքների և ՀՆԱ պոտենցիալի կորստով: Պատերազմական գործողությունների հետևանքով շուրջ 50 տոկոսով կրճատվել է անասնագլխաքանակը, Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս են մնացել վարելահողերի մոտ 75 տոկոսը, արոտավայրերի 85 տոկոսը, ոռոգովի տարածքների մոտ 90 տոկոսը, պտղատու այգիների զգալի մասը: Վերջիններիս դինամիկան իր հետևից բերել է նաև ծառայությունների ճյուղի անկման, որոնց նպաստումը ՀՆԱ-ի 17,6% միջին տարեկան անկման կազմել է 5.3 տոկոսային կետ: Միակ ճյուղը, որն ունեցել է դրական նպաստում՝ շինարարությունն է, ինչը պայմանավորված է տեղահանված անձանց բնակարանային պայմանների ապահովման համար 2021թ-ին մեկնարկած կառավարության ծրագրերով:

2022թ.-ից Արցախի տնտեսությունը սկսել է վերականգնվել. 2022թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է զգալի բարձր տնտեսական աճ՝ 18.2 տոկոս: Ինն ամիսների կտրվածքով ՀՆԱ-ն կազմել է 199.6 մլրդ դրամ (կամ 445.2 ԱՄՆ դոլար)[10]: Սակայն, բարձր աճի տեմպը տարեվերջին խաթարվել է շրջափակման հետևանքով, ինչն արտացոլվել է 2022թ. տնտեսական ակտիվության ցուցանիշում (ՏԱՑ): Այսպես, դեկտեմբերին ՏԱՑ-ը նվազել է 20.7%-ով, այն դեպքում, երբ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ՏԱՑ-ի աճի տեմպերը շարունակել են նախորդ 9 ամիսների աճերի հետ համադրելի բարձր լինել և կազմել են համապատասխանաբար 27.7% և 13.5%: Այդ

[9] Արցախի և ՀՀ տնտեսության զարգացումները նույն դինամիկան ունեն. դրական աճերը ՀՀ-ում բերում են ավելի մեծ աճի ցուցանիշների Արցախի տնտեսությունում և հակառակը: Նյութը չծանրաբեռնելու համար այս զարգացումները նկարագրող մակրոտնտեսական ցուցանիշները լրացուցիչ չենք ներկայացնում:

[10] Այս և հետագայում տեքստում ներկայացված դոլարային ցուցանիշները ստացվել են օգտագործելով համապատասխան ժամանակահատվածի ՀՀ ԿԲ դրամ/դոլար միջին փոխարժեքը:

պայմաններում, ՀՆԱ-ի տարեկան ցուցանիշը, նախնական գնահատմամբ, կազմում է մոտ 293.1 մլրդ դրամ[11]:

2022 թվականից սկսած նախորդ երկու տարում անկում ապրած ճյուղերը, Արցախում տիրող հարաբերական կայունության ֆոնին[12] սկսել են արագ վերականգնվել: 2022թ-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին զգալի է եղել արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալների աճը, որը կազմել է 46.4 տոկոս՝ ի հաշիվ «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում» (96.2 տոկոս իրական աճ) և «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» (16.7 տոկոս իրական աճ) ճյուղերի աճերի: Էական վերականգնում է ապահովել նաև գյուղատնտեսության ճյուղը. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, 2022թ. հունվար-սեպտեմբերին, կազմել է 29.5 մլրդ դրամ (65.8 մլն ԱՄՆ դոլար), որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 18.8 տոկոսով՝ ի հաշիվ բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում արձանագրված իրական աճերի՝ համապատասխանաբար 34.3 և 13.0 տոկոս: Ինչ վերաբերում է շինարարության ճյուղին, ապա վերջինս 2021թ-ի բարձր բազայի համեմատ 2022թ. առաջին ինն ամիսներին ևս աճ է գրանցել, որը կազմել է 7.1 տոկոս, իսկ իրականացված շինարարության ծավալը՝ շուրջ 46.5 մլրդ դրամի (103.7 մլն ԱՄՆ դոլար):

Չնայաց ՀՀ տնտեսության հետ Արցախի տնտեսության բարձր ինտեգրվածությանը, կառուցվածքի տեսանկյունից այն էապես տարբերվում է: Այսպես օրինակ ծառայությունների կշիռը ընդհանուր տնտեսության մեջ Արցախում շուրջ երկու անգամ փոքր է Հայաստանի համեմատ (2019-2022թթ-ի միջինը կազմել է՝ 19,9%, Հայաստանում՝ 40,1%): Փոխարենը պետական հատվածի կշիռը Արցախի ՀՆԱ-ում շուրջ 4 անգամ մեծ է ՀՀ տնտեսության նույն ցուցանիշից (2019-2022թթ-ի Արցախում միջինը կազմել է՝ 24,1%, Հայաստանում՝ 5,6%), ինչը մի կողմից ապահովում է էկզոգեն ցնցումների նկատմամբ ՀՆԱ ցուցանիշի փոքր տատանողականություն (տնտեսության կանգառի պայմաններում պետական ծառայողներն անմիջապես չեն լքում աշխատատեղը), սակայն մյուս կողմից էապես ծանրաբեռնում է բյուջեն[13]: Ինչ վերաբերում է նյութական արտադրությանը վերագրելի ճյուղերին (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն), ապա այստեղ Հայաստանի տնտեսության կառուցվածքը զիջում է Արցախին, որի պարագայում Արցախի տնտեսական կյանքի կանգառը (Ադրբեջանի արհեստական խոչընդոտների պայմաններում[14]) հանգեցնում է ՀՆԱ-ի ավելի մեծ, բացասական իմաստով, տատանողականության (2019-2022թթ-ի Արցախում նշյալ ճյուղերի միջին կշիռը կազմել է՝ 46,6%, Հայաստանում՝ 37,1%):

---

[11] Նյութը կազմելու ընթացքում Արցախի ՀՆԱ ցուցանիշները բացակայել են, ուստի տարեկան ՀՆԱ-ի գնահատականը տրվել է նախորդ 9 ամիսների ՀՆԱ-ի և հաջորդող 3 ամիսների (հոկտեմբեր-դեկտեմբեր) ՏԱՑ-ի աճի ցուցանիշները հաշվի առնելով:

[12] Ի նկատի է առնվում շրջափակման և պատերազմական գործողությունների հարաբերական բացակայության պայմաններում:

[13] Արցախում կրթությունը և առողջապահությունն ամբողջությամբ պետական են ի տարբերություն Հայաստանի և այդ իմաստով հանրային հատվածը շատ ավելի մեծ է Արցախում: Սակայն Հայաստանի առողջապահության և կրթության ճյուղերի ավելացված արժեքներից դժվար է առանձնացնել պետական և մասնավոր ընկերությունների ցուցանիշները և համադրելիության համար վերցված են պետական հատվածի ցուցանիշների համեմատականները:

[14] Ի նկատի է առնվում այն իրավիճակը, երբ Ադրբեջանը անջատում է Արցախին մատակարարվող գազը, փակում է ճանապարհը և այլն:

Աղյուսակ 1. Արցախի հանրապետության ՀՆԱ-ն, դրա կառուցվածքը և տնտեսական աճը 2019-2021թթ.

	ՀՆԱ - Ընթացիկ գներով մլրդ դրամ				*ՀՆԱ - Կառուցվածք-%*				*Իրական աճի տեմպը, %*				ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը	
	2019	2020	2021	2022*	2019	2020	2021	2022*	2019	2020	2021	2022*	2020	2021
ՀՆԱ, այդ թվում՝	**342**	**271**	**249**	**309**	**100**	**100**	**100**	**100**	***110,3***	***77,6***	***87,3***	***114.1***	**-22,4**	**-12,7**
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	32.3	25.5	13.7	19.1	9.4	9.4	5.5	6.2	*96,4*	*77,4*	*48,7*		-2,1	-4,8
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	46.9	36.5	29.4	45.1	13.7	13.5	11.8	14.6	*96,2*	*77,0*	*50,3*		-9,2	-9,8
Մշակող արդյունաբերություն	28.5	10.6	10.1	8.9	8.3	3.9	4.1	2.9	*195,1*	*37,3*	*92,7*			
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	26.8	24.3	16.6	20.2	7.8	9.0	6.7	6.5	*114,1*	*90,2*	*68,6*			
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.4	0.4	0.6	0.6	0.1	0.2	0.2	0.2	*85,3*	*98,3*	*94,6*			
Շինարարություն	36.6	28.3	41.9	44.4	10.7	10.4	16.8	14.4	*123,2*	*77,2*	*149,9*		-2,4	5,2
Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	2.3	1.5	6.4	9.7	0.7	0.6	2.5	3.1	*109,0*	*66,1*	*77,4*		-6,4	-4,2
Կացության և հանրային սննդի կազմակերպում	1.2	2.7	4.4	4.3	0.3	1.0	1.8	1.4	*140,8*	*227,1*	*89,8*			
Տեղեկատվություն և կապ	8.0	6.3	5.9	5.4	2.3	2.3	2.4	1.7	*113,0*	*78,1*	*106,2*			
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	31.1	29.8	26.9	33.0	9.1	11.0	10.8	10.7	*117,0*	*95,4*	*90,5*			
Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն	79.8	70.0	61.6	69.8	23.3	25.8	24.7	22.6	*114,5*	*85,2*	*87,8*			
Կրթություն	17.7	15.9	15.7	15.4	5.2	5.9	6.3	5.0	*100,2*	*80,6*	*98,4*			
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	12.0	10.1	11.0	12.1	3.5	3.7	4.4	3.9	*100,1*	*83,2*	*109,3*			
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	3.7	3.6	3.2	4.1	1.1	1.3	1.3	1.3	*100,7*	*96,9*	*86,7*			
Այլ ճյուղեր	9.9	6.4	9.2	11.4	2.9	2.4	3.7	3.7	*106,3*	*82,2*	*97,4*			
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	16.2	11.6	10.2	19.1	4.7	4.3	4.1	6.2	*69,2*	*58,5*	*78,9*		-1,9	-0,9
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	326.3	259.3	239.1	289.5	95.3	95.7	95.9	93.8	*113,0*	*78,5*	*87,6*		-20,5	-11,9
ՖՄԱՉԾ	-11.0	-12.6	-7.7	-5.1	-3.2	-4.6	-3.1	-1.6	*87,4*	*113,9*	*60,9*		-0,4	1,8

*** Ցուցանիշը գնահատական է:**

Աշխատանքի շուկա

Հետպատերազմյան Արցախում՝ 2021թ., 2019թ. համեմատ էապես նվազել է տնտեսապես ակտիվ բնակչության ինչպես թվաքանակը, այնպես էլ կշիռն ընդհանուր բնակչության կազմում, իսկ գործազրկության մակարդակը՝ աճել: ԱՀ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը 2021 թվականին կազմել է 43.9 հազ. մարդ, որը 2019թ. և 2020թ. համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 28 հազարով և 24.1 հազարով: Տնտեսապես ակտիվ բնակչության կշիռն ընդհանուր բնակչության կազմում 2021թ. կազմել է 44.9%՝ 2020թ. 52.3%-ի համեմատ նվազելով 7.4 տոկոսային կետով: Սա խոսում է այն մասին, որ պատերազմից հետո երկիրը լքել է հիմնականում աշխատունակ բնակչությունը: Միևնույն ժամանակ, աճել է գործազրկության մակարդակը՝ 2021թ. կազմելով 14.1%՝ 2020թ. 17.1%-ի դիմաց:

Զբաղվածների գերակշիռ մասը 2021թ. գտնվել է հանրային հատվածում (ներառյալ կրթության և առողջապահության ոլորտները՝ շուրջ 22.2 հազ. մարդ): Հանրային հատվածում զբաղվածները կազմել են ընդհանուր զբաղվածների շուրջ 60%-ը, սակայն ապահովել են ՀՆԱ-ի 35,4%-ը, ինչը խոսում է Արցախի հետպատերազմյան տնտեսության ցածր արտադրողականության մասին: Զբաղվածների թվաքանակով հաջորդ մեծ ոլորտները առևտուրը և ծառայություններն են, որտեղ զբաղվածների թվաքանակը կազմում է 4.5 հազ. մարդ, այնուհետև արդյունաբերությունը՝ շուրջ 4.3 հազար մարդ:

Գրաֆիկ 1. Արցախի հանրապետության միջին աշխատավարձերի դինամիկան:



2017-2021 թվականների ընթացքում հանրապետությունում արձանագրվել է աշխատավարձի բարձրացում միջին տարեկան 6.2 տոկոսի չափով: Ընդ որում, աշխատավարձերը աճել են նաև անկման տարիներին, որը մասամբ պայմանավորված է եղել նաև գործատուների կողմից իրենց աշխատակիցներին Արցախում պահելու լրացուցիչ խթաններ ստեղծելու գործոնով: 2022 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 255,836.0 դրամ:

Արտաքին հատված

Հետպատերազմյան ժամանակահատվածում էապես վատթարացել է Արցախի արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը: Մասնավորապես, 2021 թվականի արդյունքներով Արցախի Հանրապետությունը արտաքին առևտուր է իրականացրել 13 երկրների հետ, իսկ նախապատերազմյան շրջանում՝ 24 երկրների հետ:

Արցախի Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառությունը 2021 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է 14.6 տոկոսով, ընդ որում՝ ներմուծումը նվազել է 8.0 տոկոսով և կազմել 258.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահանումը՝ 28.1 տոկոսով՝ կազմելով 98.5 մլն ԱՄՆ դոլար: 2021 թվականին արտաքին ապրանքաշրջանառության 98.7 տոկոսը բաժին է ընկել Հայաստանի Հանրապետությանը, 0.7 տոկոսը՝ Ռուսաստանի Դաշնությանը և 0.6 տոկոսը՝ այլ երկրներին:

2022 թվականի հունվար-սեպտեմբերին արտահանման ծավալը կազմել է 170.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 3 անգամ: Ներմուծման ծավալը 2022 թվականի հունվար-սեպտեմբերին աճել է 72.1 տոկոսով և կազմել 318.9 մլն ԱՄՆ դոլար: Ներմուծման և արտահանման ցուցանիշների բարձր տեմպերը ևս խոսում են Արցախի տնտեսության հետպատերազմյան անկումների ֆոնին արագ վերականգման մասին:

2. Տնտեսական Կորուստների Գնահատումը և Գնահատման Մեթոդները

Այս բաժնում ներկայացված են Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման հետևանքով առաջացող սոցիալ-տնտեսական կորուստների գնահատման 4 մեթոդների մանրամասն նկարագրությունները: Ինչպես ներածական խոսքում ընդգծվեց, առաջացող ծախքերը գնահատելու համար տարբեր մեթոդների և գործիքների կիրառումը միտված է ամրացնելու ստացված գնահատականի հուսալիությունը: Ընդ որում, 4 մեթոդների արդյունքում ստացվող գնահատականները բավականին մոտ են գտնվել միմյանց՝ հետևապես դրանց միջինացված ցուցանիշը, որը կներկայացվի ստորև:

2.1. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ I (Ամսեկան ՀՆԱ ճեղքի գնահատում)

<u>Ընտրված մեթոդի նկարագրություն և օգտագործված տվյալների բազան</u>

Այս մեթոդով գնահատման համար, որպես թվային տվյալներ օգտագործվել են Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող եռամսյակային ՀՆԱ-ի, ինչպես նաև ամսական տնտեսական ակտիվության (ՏԱՑ) ցուցանիշները:

Շրջափակման արդյունքում Արցախի տնտեսական կորուստը գնահատելու համար նախ գնահատվել է Արցախի 2022թ. ՀՆԱ-ն, որը կստեղծվեր, եթե չլիներ շրջափակումը (առանց շոկի ազդեցության, միտումների հիման վրա գնահատված ՀՆԱ): Այնուհետև հաշվարկվել է վերջինիս և փաստացի ցուցանիշների տարբերությունը, որը հենց հանդիսանում է շրջափակման արդյունքում առաջացած կորուստը (ՀՆԱ ճեղքի գնահատական): Քանի որ սույն նյութի կազման ընթացքում բացակայել են 4-րդ եռամսյակի Արցախի ՀՆԱ փաստացի ցուցանիշները, սակայն առկա են եղել տնտեսական ակտիվության աճի փաստացի ամսեկան ցուցանիշները[15], ուստի առաջին քայլով գնահատվել է չորրորդ եռամսյակի փաստացի ՀՆԱ-ի մեծությունը. Դրա համար օգտագործվել է նաև Հայաստանի ՏԱՑ-ի փաստացի ցուցանիշները, ինչպես նաև ամսեկան ՏԱՑ-ի համար հաշվարկված ամսեկան սեզոնայնության գործակիցները: Քանի որ Հայստանի և Արցախի տնտեսություններն ամբողջովին ինտեգրված են և գտնվում են նույն ցիկլում (տնտեսական աճերի (ՏԱՑ) կորելացիայի գործակիցը 0.95 է), ուստի ՀՀ-ի ՏԱՑ-ի ամսեկան սեզոնայնության գործակիցները կիրառելով Արցախի փաստացի ամսեկան աճերի վրա, ստացել ենք եռամսյակային ՏԱՑ-երի ցուցանիշները: Որից հետո վերցվել է երրորդ և չորրորդ եռամսյակների ՏԱՑ-ի ցուցանիշների արագացումը, ինչպես նաև օգտագործելով ՏԱՑ/տնտեսական աճ միջինացված գործակիցը, դուրս է բերվել Արցախի 4-րդ եռամսյակի փաստացի ՀՆԱ (դիսկրետ) աճի գնահատված ցուցանիշը: Վերջինս ճշգրտվել է նաև գնային փոփոխականով և 4-րդ եռամսյակի ՀՆԱ անվանական աճի գնահատված ցուցանիշն ունենալով արդեն ստացվել է 4-րդ եռամսյակի փաստացի ՀՆԱ-ի անվանական մեծությունը՝ 93.5 մլրդ դրամ (իսկ տարեկան ՀՆԱ փաստացի գնահատված ցուցանիշը 293.1 մլրդ դրամ):

[15] Դեկտեմբերի փաստացի ՏԱՑ-ում շոկը ներառված է:

Երկրորդ քայլով անհրաժեշտ է եղել գնահատել 4-րդ եռամսյակի այն ՀՆԱ մակարդակը, որը կլիներ եթե պահպանվեր նախորդ եռամսյակների միտումները և Արցախի տնտեսությունը դեկտեմբերին շրջափակման չենթարկվեր: Դրա համար որպես մոտարկում վերցվել են Հայաստանի տնտեսական միտումները[16], այսինքն ինչպիսին է եղել տնտեսական ակտիվության աճերի դինամիկան երրորդ և չորրորդ եռամսյակներին: Այդ դինամիկան տարածվել է նաև Արցախի ՏԱՑ ցուցանիշների վրա, այսինքն դեկտեմբերի համար վերցվել է ոչ թե փաստացի անկման ցուցանիշը (-20.7% դեկտեմբերը 2021թ-ի դեկտեմբերի նկատմամբ), այլ նոր մոտարկումով գնահատված առանց շոկի աճի ցուցանիշը՝ 12.5%: Հետագայում կատարվել են նույն քայլերը, ինչ առաջին մասում է նկարագրված, որպեսզի ստանանք առանց շոկի գնահատված 4-րդ եռամսյակի ՀՆԱ-ն: Վերջում 4-րդ եռամսյակի համար ստացված այս երկու ՀՆԱ-ների տարբերությունը հանդիսանում է հենց ՀՆԱ ճեղքը, կամ այն ՀՆԱ մեծությունը, որը Արցախը կորցրել է դեկտեմբերին շրջափակման արդյունքում: Ստացված անվանական մեծությունն էլ բաժանվել է դեկտեմբերին շրջափակման օրերի քանակի վրա (դեկտեմբերի 12-ից 31-ը) և ստացվել օրական **<u>ՀՆԱ առաջնային կորուստը</u>**:

Պետք է նաև նշել, որ տնտեսագիտական թեզ է այն, որ տնտեսական նմանատիպ կորուստներն իրենց հետևից գեներացնում են նաև ապագայում նոր արժեք ստեղծելու հնարավորությունների կորուստ: Ասվածը պարզ ներկայացնելու համար. Եթե ուժգին քամու պատճառով տան տանիքը վնասվում է, իսկ սեփականատերն այդ տունը վարձով էր տալիս և ստանում վարձավճարի մասով օգուտ, հետևապես սեփականատիրոջ վնասը, ոչ միայն այն ծախսն է որը պետք է կատարել տանիքը վերանորոգելու համար, այլև այն, որ վերջինս այդ ողջ վերանորոգման ընթացքում չի ստացել իր հասանելիք գումարը՝ այսպես ասած բաց է թողել իր օգուտը: «Բաց թողնված օգուտը» կամ այլ կերպ տնտեսագիտորեն ձևակերպած վնասի մուլտիպլիկատիվ էֆեկտը ևս փորձ է արվել գնահատվի:

Վերջինիս համար գնահատավել է Արցախի տնտեսության 2023թ-ի առանց շոկի տարեկան աճը՝ օգտագործելով EViews ծրագրով Հոլթ Ուինթերի հարթեցման գործիքը Արցախի տնտեսության անվանական աճերի ցուցաների շարքի վրա[17]: 2022թ-ի համար վերցվել է առանց շոկի գնահատված ցուցանիշը, այսինքն ինչ կլիներ ՀՆԱ-ն, եթե չլիներ շրջափակումը, և դրա վրա կիրառվել է Հոլթ Ուինթերով ստացված տնտեսական աճի գնահատականը: Վերջում տարեկան անվանական ՀՆԱ ցուցանիշը բերվել է օրականի, որն իրենից ներկայացնում է **<u>Արցախի տնտեսական կորուստը՝ հաշվի առած նաև կորուստի մուլտիպլիկատիվ էֆեկտը</u>**:

<u>Գնահատման արդյունքները</u>

Այս մոտեցմամբ 2022թ. 4-րդ եռամսյակում գնահատվում է, որ անվանական ՀՆԱ-ն նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կաճեր 20.5%-ով, սակայն քանի որ դեկտեմբեր ամսին գրանցվել է տնտեսական ակտիվության 20.7% անկում (12.5% հնարավոր աճ գրանցելու փոխարեն, եթե շոկ չլիներ), արդյունքում 4-րդ եռամսյակում անվանական ՀՆԱ-ն փաստացի աճել է շուրջ 8%-

[16] Այստեղ պետք է հաշվի առնենք, որ ՀՀ և Արցախի տնտեսությունների ինտեգրումները նշանակում է նաև, որ Հայաստանի տնտեսությունը ևս վնասվել է Արցախի շրջափակման պատճառով: Ուստի եթե մոտարկման համար կիրառում ենք տարվա վերջին 3 ամսիների ՀՀ տնտեսության միտումները, ապա վստահորեն կարելի է պնդել, որ Արցախի տնտեսությունը ՀՀ տնտեսության միտումներն ունենալու պարագայում **<u>ամենանվազագույնը</u>** մոտարկված տեմպերով դեկտեմբերին կաճեր:

[17] Հոլթ Ուինթեր-ի գործիքը հնարավորություն է տալիս ավելի շատ հաշվի առնել վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճի միտումները, քան սկզբնական տարիներին: Ընդ որում, պատերազմի տարվա և դրան հաջորդող տարվա ցուցանիշները հսկվել են (հաշվի չեն առնվել), որպեսզի գործիքը ճիշտ պոտենցիալ գնահատականը տա:

ով: Հետևաբար ստացվում է, որ 2022թ. 4-րդ եռամսյակում անվանական ՀՆԱ աճը հնարավոր աճից ցածր է եղել 12.5 տոկոսային կետով: Գնահատված կորուստը 2022թ. դեկտեմբեր ամսին կազմել է 10.9 մլրդ դրամ (շուրջ 27 մլն ԱՄՆ դոլար), կամ օրական (18 օր շրջափակում) 603 մլն դրամ (1.5 մլն ԱՄՆ դոլար): Վերջինս գնահատված ՀՆԱ կորուստի առաջնային էֆեկտն է՝ հիմք ընդունելով դեկտեմբերի ցուցանիշները: Երբ փորձում ենք, այս գնահատումներում հաշվի առնել նաև մուլտիպլիկատիվ էֆեկտը (տարածել 2023թ. վրա, այսինքն ինչ կլիներ ՀՆԱ հետգա աճը եթե շոկ չլիներ), պետք է հաշվի առնել, որ տարվա ընթացքում դեկտեմբեր ամիսը համեմատաբար ունի ավելի մեծ տեսակարար կշիռ, ուստի կիրառելով սեզոնայնության գործակիցները այս կորուստը 2022թ համար գնահատվում է միջինում օրական 447 մլն դրամ (1.1 մլն դոլար): Բացի այդ, հաշվի առնելով ՀՆԱ հնարավոր հետագա տարվա գնահատված աճը ՝ 12.3%, մուլտիպլիկատիվ էֆեկտը հաշվի առած ՀՆԱ կորուստը ստացվում է միջինում օրական **<u>502 մլն դրամ (1.3 մլն դոլար)</u>**:

2.2. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ II (ՀՆԱ ճեղքի գնահատումն ըստ ճյուղային կառուցվածքի)

<u>Ընտրված մեթոդի նկարագրություն և օգտագործված տվյալների բազան</u>

Այս մեթոդի դեպքում, որպես թվային տվյալներ օգտագործվել են Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող 2022թ. առաջին երեք եռամսյակների ՀՆԱ-ի ոլորտային փաստացի ցուցանիշները, ինչպես նաև նախորդ մեթոդով գնահատված 4-րդ եռամսյակի ՀՆԱ աճի ցուցանիշը:

Քանի որ առաջին մեթոդի կիրառման դեպքում արդեն իսկ ունենք գնահատված 2022թ-ի և 2023թ-ի առանց շոկի ազդեցության ՀՆԱ-ների անվանական մեծությունները, ճյուղային կշիռներն օգտագործելով ստացվել են ՀՆԱ-ներն ըստ ճյուղերի: Մասնավորապես, 2023թ. ճյուղային ՀՆԱ-ների գնահատման համար կիրառվել է առաջին մեթոդում նկարագրված ՀՆԱ-ի կանխատեսումը և դրա նկատմամբ կիրառվել 2022թ. տնտեսության գնահատված ճյուղային կառուցվածքը: Այնուհետև յուրաքանչյուր ճյուղի ներկայացուցիչ հիմնական ընկերությունների հարցումների և փորձագիտական դատողությամբ գնահատվել է յուրաքանչյուր ոլորտի հնարավոր կորուստը շրջափակման պայմաններում: Յուրաքանչյուր ոլորտի համար կիրառվել է շրջափակման պայմաններում գործունեության իրականացման հնարավորության փորձագիտական դատողությունը 0-ից 1 միջակայքով, որտեղ 0-ն ներկայացվել է, որ ոլորտի ընկերության (ընկերությունների) գործունեությունը լիարժեք կանգ է առել շրջափակման արդյունքում (օրինակ հանքագործությունը) և 1, եթե տվյալ ճյուղի գործունեությունը շրունակվել է նույնիսկ շրջափակման ժամանակ (օրինակ առողջապահական ծառայությունները, թեև այն և նմանատիպ այլ ճյուղերը կանգ չեն առել, սակայն հնարավոր չէ նույն տեմպերով շարունակեին իրենց գործունեությունը: Միայն բնակչության եկամուտների կորուստը բավարար է կարծելու, որ այսպիսի ճյուղերի թողարկումների ծավալները կկրճատվեն): Ընդ որում, փորձագիտական գնահատականը ստուգելու և ամրացնելու համար, ուսումնասիրվել է նաև Արցախի 453 խոշոր հարկատուների 2023թ-ի հունվարի համար ներկայացված հաշվետվություններից դուրս բերված շրջանառությունների ծավալները (այդ ձեռնարկությունների շրջանառությունների կոնսոլիդացումը NACE դասակարգչի համապատասխան կատարվել է նաև դեկտեմբերի ցուցանիշների համար, որը ներկայացված է III

մեթոդի նկարագրության մեջ ստորև): Յուրաքանչյուր ոլորտի համար կիրառված գործակիցները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 2. Շրջափակման պայմաններում առանձին ոլորտների գործունեության հնարավորության փորձագիտական դատողության գործակիցները

Ոլորտը	Գործունեության պահպանման հնարավորությունը 2023թ.-ին (0 – 1 միջակայքում, որտեղ 0 –ն նշանակում է ոլորտն ամբողջությամբ դադարելու է գործել)
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	0.4
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	0
Մշակող արդյունաբերություն	0
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	0.3
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.6
Շինարարություն	0
Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	0.05
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	0.25
Կացության և հանրային սննդի կազմակերպում	1
Տեղեկատվություն և կապ	0.8
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	0.8
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0.2
Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.8
Պետական կառավարում և պաշտպանություն.պարտադիր սոցիալական ապահովագրություն	0.8
Կրթություն	0.8
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	0.8
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	0.1
Սպասարկման այլ ծառայություններ	0.5

Գնահատման արդյունքները

Այս մոտեցմամբ շրջափակման արդյունքում օրական տնտեսական կորուստը գնահատվում է շուրջ 567 մլն դրամ (1.4 մլն դոլար): Մասնավորապես, 2023թ. անվանական ՀՆԱ-ն առանց շրջափակման ազդեցության կանխատեսվում է, որ կկազմեր 341.4 մլրդ դրամ (862.3 մլն դոլար), մինչդեռ որոշ ոլորտների գործունեության ամբողջական, իսկ մնացածի դեպքում մասնակի դադարեցման պարագայում, ՀՆԱ-ն կնվազի շուրջ 207.1 մլրդ դրամով (523.1 մլն դոլար), որը

օրացուցային օրերի թվի վրա բաժանելու դեպքում, օրական կորուստը կկազմի **<u>567 մլն դրամ (1.4 մլն դոլար)</u>**:

2.3. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ III (ՀՆԱ ճեղքի գնահատում՝ Միկրոտվյալներից Մակրոտվյալների անցմամբ)

<u>Ընտրված մեթոդի նկարագրություն և օգտագործված տվյալների բազան</u>

Որպեսզի վերը նկարագրված մեթոդներով ստացված արդյունքները լրացուցիչ ստուգվեն, այս՝ երրորդ մեթոդի կիրառման համատեքստում օգտագործվել են միկրո՝ ձեռնարկությունների մակարդակի տվյալներ: Այդ առումով օգտագործվել են 2022թ. հոկտեմբեր-դեկտեմբեր, ինչպես նաև 2023թ-ի արդեն հունվար ամիսների հիմնական խոշոր՝ 453 ձեռնարկությունների շրջանառությունների վերաբերյալ տվյալները:

Գնահատվել է 2022թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում նշված ձեռնարկությունների շրջանառությունների գնահատված փաստացի կորուստը և այն վերածել ՀՆԱ կորստի՝ հաշվի առնելով 2022 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) աճի և ընտրված ձեռնարկությունների շրջանառությունների աճերի միջև հարաբերակցությունը: Մասնավորապես, առանձին ձեռնարկությունների միկրոտվյալներից նախ անցում է կատարվել ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգման (NACE), այսինքն ձեռնարկությունների շրջանառությունները կոնսոլիդացվել են ըստ NACE դասակարգման: Հաշվի առնելով, որ բացակայում է «պետական կառավարման և պաշտպանություն» ու «առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում» ոլորտները, այս ոլորտների տվյալները ավելացվել են՝ հաշվի առնելով նշված ոլորտների կշիռը ՀՆԱ-ում 2021թ. հոկետմբեր-դեկտեմբեր ամիսներին (28.5%), իսկ 2022թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների տվյալները ստացվել են 2021թ. համապատասխան ամիսը աճեցնելով 2022թ. 4-րդ եռամսյակի վերոնշյալ ոլորտների գնահատված 18.2% անվանական աճով:

Արդյունքում ստացվել է, որ 2022թ. հոկտեմբեր ամսին ընտրված ձեռնարկությունների շրջանառությունը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է շուրջ 23%-ով, իսկ նոյեմբեր ամսին աճը նախորդ ամսվա հմեմատ արագացել է, հասնելով 62%-ի: Սակայն դեկտեմբեր ամսին շրջանառությունը կտրուկ նվազել է՝ կազմելով 18.4 %: Այսպիսով, դեկտեմբեր ամսին՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների համեմատ շրջանառության աճի տեմպը դանդաղել է շուրջ 61 %-ային կետով: Հաշվի առնելով 2022թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների տնտեսական ակտիվության աճի և ձեռնարկությունների միկրոտվյալներից ստացված շրջանառության աճերի միջև հարաբերակցությունը, գնահատվում է, որ դեկտեմբեր ամսին ՏԱՑ-ի աճի կորուստը կազմել է շուրջ 29.5%-ային կետ: Այսինքն, այլ հավասար պայմաններում, եթե դեկտեմբեր ամսին բաց լիներ կյանքի ճանապարհը, ապա դեկտեմբերի ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կաճեր շուրջ 9 %-ով, ինչը նաև համադրելի է 2022թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին գրանցած աճին (հիշեցնենք, որ 2022թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ Արցախի ՏԱՑ-ը աճել է միջինում շուրջ 20%-ով, իսկ դեկտեմբեր ամսին նվազել 20.7%-ով):

Գնահատման արդյունքները

Վերոնշյալ գնահատումների արդյունքում, դեկտեմբեր ամսվա համար ՀՆԱ կորուստը գնահատվել է շուրջ 9.5 մլրդ դրամ (23.9 մլն դոլար): Հարկ է նշել, որ դեկտեմբեր ամսին «կյանքի ճանապարհը» փակ է եղել 18 օր, այսինքն միջին օրական կորուստը դեկտեմբեր ամսին կազմել է 526 մլն դրամ (1.3 մլն դոլար): Միաժամանակ հաշվի առնելով, որ տարվա ընթացքում դեկտեմբեր ամիսը համեմատաբար ունի ավելի մեծ կշիռ, ուստի այս կորուստը 2022թ համար գնահատվում է միջինում օրական 397 մլն դրամ կամ 1 մլն դոլար: Բացի այդ, հաշվի առնելով կորուստի մուլտիպլիկատիվ էֆեկտը և 2023թ. Հոլթ-Ուինթերի գործիքով ՀՆԱ գնահատված հնարավոր աճը (12.3%)՝ կորուստը (ներառյալ նաև մուլտիպլիկատիվ էֆեկտը) ստացվում է միջինում օրական **446 մլն դրամ (1.1 մլն դոլար):**

2.4. Տնտեսական Կորստի Գնահատման Մեթոդ IV (ՀՆԱ ճեղքի գնահատում էկոնոմետրիկ մոդելներով)

Ընտրված մեթոդի նկարագրություն և օգտագործված տվյալների բազան

Արցախի շրջափակման արդյունքում 2023թ. ՀՆԱ հնարավոր կորստի գնահատման համար մասնագիտական խմբի կողմից կիրառվել է նաև էկոնոմետրիկ գործիքակազմ, որը, հիմնվելով պատմական տվյալների և ընտրված ցուցանիշների դինամիկ փոխազդեցությունների վրա, հանրավորություն է տալիս գնահատել շրջափակման պայմաններում (ավտարկիա կամ տնտեսություն առանց արտաքին առևտրի) սպասվող ՀՆԱ կորուստը մակրոմակարդակում: Մասնավորապես, ՀՆԱ հնարավոր կորուստը՝ ներառյալ մուլտիպլիկատիվ էֆեկտը, գնահատելու համար կառուցվել է կառուցվածքային վեկտորական ավտոռեգրեսիվ (SVAR) մոդել[18], որի գնահատման համար օգտագործվել են Արցախի ՀՆԱ անվանական աճի, արտահանման և ներմուծման դրամային աճերի 2002-2021թթ. տարեկան տվյալները: Ակնհայտ է, որ շրջափակման դեպքում տոտալ կանգ է առնում դեպի Արցախ ներմուծումն ու Արցախից արտահանումը, այսինքն տնտեսությունը վերածվում է ավտարկիայի:

Մոդելը ունի հետևյալ մատրիցային տեսքը՝

$$BY_t = C + AY_{t-1} + e_t$$

որտեղ $Y_t = [IM_t, EX_t, GDP_t]$ – ներմուծման, արտահանման և ՀՆԱ անվանական աճերի վեկտորն է: A-ն լագերի ազդեցության պարամետրերի մատրիցն է, C-ն ազատ անդամ պարամետրերի վեկտորը, B-ն կառուցվածքային պարամետրերի մատրիցն է, որը հատկորոշվել է Չոլեսկու կառուցվածքով, e_t-ն մոդելի կառուցվածքային սխալներն են:

Կառուցված մոդելի (տես Հավելված 1) միջոցով գնահատվել է արտահանման և ներմուծման համապարփակ (ուղղակի և անուղղակի) ազդեցությունները ՀՆԱ-ի վրա:

Մոդելի ազդակ-արձագանքման ֆունկցիաների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ արտահանման 1%-ով աճի փոփոխությունը հանգեցնում է ՀՆԱ–ի անվանական աճի 0.11% փոփոխության, իսկ ներմուծման աճի 1% փոփոխությունը առաջացնում է ՀՆԱ անվանական աճի

[18] SVAR մոդելների առավել մանրամասը նկարագրությունը տե՛ս Walter Enders, "Applied econometric time series", University of Alabama, Fourth edition, 2015, Chapter 5, pp. 313-335:

0.34% փոփոխություն[19]: Այսպիսով, հաշվի առնելով, որ 2012-2021թթ. տարիների համար արտահանման կշիռը ՀՆԱ-ում եղել է շուրջ 22%, իսկ ներմուծման կշիռը շուրջ 58%, վերոնշյալ մոդելով գնահատված առաձգականության գործակիցներից կարող ենք ստանալ ՀՆԱ –ի վրա արտահանման և ներմուծման բազմարկիչները, այն է մեկ դրամ արտահանման կամ ներմուծման փոփոխությունը քանի դրամ ՀՆԱ փոփոխության կհանգեցնի: Առաձգականությունից բազմարկիչների անցումը կարելի է իրականացնել հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$\boldsymbol{M_i = \frac{\rho_i}{w_i}}, \qquad \boldsymbol{i} = \textit{արտահանում, ներմուծում}$$

Որտեղ M_i , համապատասխանաբար, արտահանման կամ ներմուծման բազմարկիչն է ՀՆԱ համար, ρ_i-ն ՀՆԱ առաձգականությունն է, համապատասխանաբար, արտահանումից կամ ներմուծումից, w_i-ն համապատասխանաբար, արտահանման կամ ներմուծման կշիռն է ՀՆԱ-ում:
Այսպիսով, կիրառելով այս բանաձևը՝ արտահանման բազմարկիչը ստացվում է 0.48 իսկ ներմուծման բազմարկիչը ՝ 0.58:
Ունենալով արտահանման և ներմուծման բազմարկիչների գնահատականները, ՀՆԱ կորուստը գնահատելու համար մեզ անհրաժեշտ է պատկերացում կազմել 2023թ. արտահանման և ներմուծման ծավալների մասին: 2023թ. արտահանման և ներմուծման ծավալները ստանալու համար կիրառվել է պատմական՝ 2012-2019թթ. միջին անվանական աճերը (արտահանում՝ 24.7%, ներմուծում՝ 5.9%):

<u>Գնահատման արդյունքները</u>

Այսպիսով, այլ հավասար պայմաններում, եթե չլիներ ներկա ստեղծված իրավիճակը, 2023 թվականի համար Արցախի արտահանումը կկազմեր շուրջ 175.8 մլրդ դրամ (444.3 մլն դոլար), իսկ ներմուծումը՝ շուրջ 207.6 մլրդ դրամ (524.6 մլն դոլար): Ենթադրելով, որ բլոկադայի ընթացքում հնարավոր չի լինելու իրականացնել արտահանում և ներմուծում, ապա կիրառելով վերջիններիս բազմարկիչները **2023թ. համար ՀՆԱ կորուստը կկազմի միջինում օրական 561 մլն դրամ (1.4 մլն դոլար):**

2.5. Արցախի Համախառն Ներքին Արդյունքի կորուստները (4 մոտեցումների ամփոփում)

Վերոնշյալ չորս մեթոդները բավական մոտ և, հետևաբար, արժանավահատ արդյունքներ են բացահայտում Արցախի տնտեսական կորուստների վերաբերյալ: **Դրանց հիման վրա կարելի է եզրակացնել, որ ՀՆԱ-ի կորուստը օրական կազմում է 1.35 մլն ԱՄՆ դոլար:**

[19] Այստեղ կարևոր է նշել, որ ներմուծման ազդեցությունն անուղղակիորեն իր մեջ ներառում է ներմուծման հետ կապված սպառման և ներդրումների ազդեցությունները, քանի որ սպառման և ներդրումների ցուցանիշները նեռաված չեն մոդելում: Հենց այս պատճառով էլ մոդելում չեն ներառվել սպառման և ներդրումների աճերի ցուցանիշները՝ որպեսզի հնարավոր լինի գնահատել ներմուծման անուղղակի ազդեցությունները, որոնք առաջանում են ներմուծվող սպառման և ներդրումների ճանապարհով: Բացի այդ ներմուծման դրական բազմարկիչը հետևանք է նաև այն հանգամանքի, որ ներմուծվող միջանկյալ սպառման և կապիտալ բնույթի ապրանքները օգտագործվում են արտադրական գործընթացում և օգնում ստեղծել ավելացված արժեք (ՀՆԱ):

Աղյուսակ 3: Արցախի Համախառն Ներքին Արդյունքի կորուստները (4 մոտեցումների ամփոփում)

Մոտեցում	2023թ. ՀՆԱ կորուստ, մլն դրամ	Մեկ օրացույցային օրվա հաշվարկով, մլն դրամ
1. Ամսեկան ՀՆԱ ճեղքի գնահատում	183,143	502
2. ՀՆԱ ճեղքի գնահատումն ըստ ճյուղային կառուցվածքի	207,086	567
3. ՀՆԱ ճեղքի գնահատում՝ Միկրոտվյալներից Մակրոտվյալների անցմամբ	162,686	446
4. ՀՆԱ ճեղքի գնահատում էկոնոմետրիկ մոդելներով	204,846	561
Միջին, մլն դրամ[20]	194,949	534
Միջին, մլն դոլար	**492.4**	**1.35**

[20] Քանի որ 1.-ին և 2.րդ մոտեցումները ըստ էության հիմնված են դեկտեմբեր ամսվա կորստի գնահատականի վրա, ուստի ընդհանուր միջին ցուցանիշը հաշվարկելիս օգտագործվել է այս երկու մոտեցումների միջինը:

3. ՀՆԱ կորստի առաջացրած առաջնային սոցիալական ծախքերը (Գործազրկություն, սոցիալական բարեկեցության անկում)

Վերը նկարագրված տնտեսական կորուստներն անխոս իրենց հետևից բերում են սոցիալական լարվածություն և սոցիալական ծախքեր, որը Արցախը պարտադրված պետք է կրի: Այսինքն անձի կյանքն ու բարեկեցությունը եթե ժամանակին ապահովվում էր վերջինիս աշխատանքով և Արցախի տնտեսական գործունեության մեջ մասնակցությամբ, ապա շրջափակումից հետո անձի աշխատանքի՝ հետևապես և եկամտի կորուստի հետևանքը ծածք է, որը պարտդրված պետք է կրի Արցախի կառավարությունը: Ուստի, որպեսզի գնահատվի նշյալ սոցիալական ծախքերը, անհրաժեշտ է նախ գնահատական տրվի, թե տնտեսական կյանքի կանգ առի և ՀՆԱ կորստի համատեքստում որքան անձ գործազուրկ կդառնա:

«Կյանքի ճանապարհի» փակման արդյունքում լրացուցիչ գործազրկությունը գնահատվել է հիմնվելով առանձին ճյուղերի/տնտեսական ոլորտների զբաղվածության բաշխման և կորուստների վրա: Մասնավորապես, ենթադրվել է, որ նույն արտադրողականության պայմաններում նման ՀՆԱ կորստի դեպքում ինչքան գործազրկություն կառաջանա: Հիմնական արդյունքները ստացվել են 2-րդ մոտեցման առանձին ճյուղերի կորուստների գնահատականների հիման վրա: Ադյունքում ստացվել է, որ շուրջ 17.2 հազար մարդ կդառնա գործազուրկ, եթե «կյանքի ճանապարհը» մնա փակ: Այնուհետև, հաշվի առնելով մյուս մեթոդներից ստացված ՀՆԱ կորստի չափերը, համամասնորեն ճշգրտվել են նաև հնարավոր գործազուրկների թվաքանակը: **Արդյունքում, միջինում կարող է առաջանալ լրացուցիչ 16.2 հազար գործազուրկների առկայություն:**

Ուստի կառավարության համար առաջանում է ևս մեկ բեռ, այս նոր գործազուրկ մարդկանց առնվազն նվազագույն սոցիալական պահանջներն ապահովելու համար տրամադրել նպաստներ: **Այսպիսով, 1 գործազուրկի համար 68 հազար դրամ նպաստ տրամադրելու դեպքում պետական բյուջեի համար առաջանում է օրական շուրջ 36.3 մլն դրամի (92 հազ. դոլար) լրացուցիչ ծախս:**

Պետք է նաև հաշվի առնել, որ քանի դեռ անձը զբաղված էր և աշխատանք ուներ, իր բարեկեցությունը ավելի բարձր էր, քանի որ ստացված աշխատավարձը ակնհայտ 68 հազար դրամ նպաստից բարձր է: Հետևապես այստեղ առկա է նաև բարեկեցության կորուստ, երբ անձը և իր ընտանիքը զրկվում են այն եկմատից, որը ստացել են նախկինում: Հետևաբար այս հանգամանքը հաշվի առնելու համար հաշվարկներում օգտագործվել է Արցախի միջին աշխատավարձը 2022թ-ի 9 ամսիներով, որը կազմել է 255,8 հազար դրամ: Արդյունքում, գործազուրկ դարձած անձանց բարեկեցության կորստի լիարժեք փոխհատուցման դեպքում օրական ծախքը կկազմի շուրջ **136 մլն դրամ (345 հազ. դոլար)**

4. ՀՆԱ կորստի հետևանքով բյուջեի ծանրաբեռնվածության աճը

Արցախի բյուջեի մուտքերի մոտ 73%-ը, հետպատերազմյան ժամանակաշրջանում, Հայաստանից տրամադրվող բյուջետային վարկն է: Մնացած 27%-ը՝ հարկային եկամուտներն են, որոնցից 7 տոկոսային կետը՝ հանքարդյունաբերության ոլորտի վճարած հարկերն են:

Աղյուսակ 4: Արցախի պետական բյուջեի ցուցանիշները

Ցուցանիշներ	Չափի միավորը	2021թ. (փաստ)	2022թ. (պլան)	2023թ. (պլան)
Պետական բյուջեի եկամուտներ, այդ թվում.	մլն դրամ	175,548.3	189,554.1	185,850.0
Հարկային եկամուտներ (ներառյալ այլ եկամուտները)	մլն դրամ	35,182.0	45,554.1	49,850.0
Բյուջետային վարկ ՀՀ-ից	մլն դրամ	140,366.3	144,000.0	136,000.0
Պետական բյուջեի ծախսեր	մլն դրամ	224,158.5	221,035.2	215,171.4
Պետական բյուջեի դեֆիցիտ	մլն դրամ	-48,610.2	-31,481.1	-29,321.4

Ինչ վերաբերում է ծախսերի մակարդակին և դրանց կառուցվածքին, ապա Արցախի բյուջեի ծախսային կառուցվածքը հիմնականում սոցիալական բնույթ ունի և դա պայմանավորված է նաև օբյեկտիվ պատճառներով, քանզի հետպատերազմյան շրջանում շուրջ 30,000 անտուն մնացած Արցախցիների խնդրի համատեքստում, ակնհայտ պետք է մեծանար բյուջետային ծախսերում սոցիալական բնույթի ծախսերի մասնաբաժինը: Վերջինս Արցախի տնտեսական տարածքների կորստի հետևանքով բյուջետային եկամուտների էական նվազման և սոցիալական ծախսերի պահանջի մեծացման ֆոնին էլ ավելի է մեծացնում բյուջետային լարվածությունը:
Արցախի պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 5: Արցախի 2021-2023թթ. պետական բյուջեների ծախսերն ըստ ոլորտների

Ցուցանիշներ	2021թ. (փաստ, մլն դրամ)	2022թ. (պլան, մլն դրամ)	2023թ. (պլան, մլն դրամ)
Պետական բյուջեի ծախսեր	224,158.5	221,035.2	215,171.4
այդ թվում.			
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (պետական և համայնքային կառավարում, տոկոսավճարներ)	19,297.4	32,412.7	32,310.8
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	10,370.6	20,840.5	24,645.2
Տնտեսական հարաբերություններ, ենթակառուցվածքներ, գյուղատնտեսություն	34,018.3	31,644.9	23,544.4
Բնապահպանություն	194.1	266.7	205.3

Առողջապահություն	8,856.6	15,500.0	13,401.2
Մշակույթ	2,598.7	3,120.3	2,983.6
Կրթություն	13,850.7	17,331.2	15,497.0
Սոցիալական պաշտպանություն	100,583.8	57,564.2	72,939.9
Կապիտալ ներդրումներ	23,948.4	34,500.0	22,000.0
Կենտրոնացված ֆոնդեր (կառավարության պահուստային ֆոնդ և այլն)	10,439.9	7,854.8	7,644.0

Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակումը Արցախի պետական բյուջեի վրա լրացուցիչ բեռի ավելացման տեսանկյունից ազդում է երկակի. մի կողմից, տնտեսության անկման պայմաններում բյուջետային մուտքերի էլ ավելի կրճատման, և մյուս կողմից՝ չնախատեսված հրատապ և անհետաձգելի ծախսերի պարտադիր կատարման պահանջի մեծացման պատճառով:

Արցախի տնտեսության նյութական արտադրության և ծառայությունների գրեթե բոլոր ճյուղերի ձեռնարկությունները այս կամ այն չափով օգտագործում են ներկրվող հումք (առնվազն՝ վառելիքաքսուկային նյութեր, քանի որ գազամատակարարման խափանումից հետո կանգնեց նաև գազով աշխատող տրանսպորտային պարկը): Բացի այդ, քանի որ Հայաստանի Հանրապետությունից ներկրվող էլեկտրաէներգիայի օդային գիծը նույնպես խափանվել է Ադրբեջանի կողմից, իսկ էլեկտրաէներգիայի ներքին արտադրությունը բավարարում է միայն ընդհանուր պահանջարկի մոտ կեսը, արտադրական հզորություններին հոսանք չի տրամադրվում: Այս պայմաններում կարողանում են շարունակել իրենց գործունեությունը միայն որոշ ծառայություններ (օրինակ, ֆինանսական կամ SS ոլորտի) մատուցող կամ բյուջետային հատվածի կազմակերպությունները: Այլ կազմակերպություններ գործունեություն հիմնականում չեն իրականացնում և հարկեր չեն վճարում:

Հետևապես՝ Հայաստանի կողմից տրամադրվող ֆինանսական օժանդակության սահմանափակվածությունը մի կողմից և բյուջեի մուտքային մասի հոսքերի կրճատման հանգամանքը մյուս կողմից, հանգեցնում են նրան, որ Արցախի բյուջեն ծախսերի կրճատման և նոր գերակայությունների սահմանման ուղղությամբ պարտադրված վերանայումներ պետք է անի, ինչը նշանակում է լրացուցիչ ծախք և կորուստ Արցախի սոցիալ-տնտեսական կյանքում:

Վերը նկարագրած չորս մեթոդներով ՀՆԱ-ի կորուստների գնահատականների նկատմամբ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության կիրառումը թույլ է տալիս գնահատել նաև հարկերի՝ հետևապես նաև բյուջետային ծախսերի վերանայումների և որոշ ծախսերի կատարման հետաձգման, կասեցման կամ կրճատման ծախքը, որը գնահատվում է օրական 81 մլն դրամ կամ շուրջ 204 հազար ԱՄՆ դոլար, իսկ շրջափակման ողջ ընթացքում (80 օրերի հաշվարկով)՝ շուրջ 6.5 մլրդ դրամ (16.4) մլն ԱՄՆ

Մյուս կողմից, պետության առջև ճգնաժամային ստեղծված իրավիճակում կանգնած խնդիրների լուծման անհրաժեշտությունը ստիպում է Արցախի կառավարությանը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնել բազմաթիվ չնախատեսված ծախսեր, ինչպես օրինակ.

- Բնակչության պարենային և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով ապահովման նպատակով կատարվող տրանսպորտային և այլ ծախսեր,
- Ներկրվող էլեկտրաէներգիայի և գազի բացակայությամբ պայմանավորված էներգետիկ համակարգի պահմանման և վերականգնման, առանձին բնակավայրերում ջրամատակարարման ծախսեր,
- ՀՀ-ում մնացած ԱՀ քաղաքացիների և ԱՀ-ում մնացած ՀՀ քաղաքացիների կեցության ապահովման ծախսեր,
- շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմման ուղղված ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցության ծրագրերի իրականացման և այլ ծախսեր:

Օրական կտրվածքով, ինչպես նշվեց նախորդ բաժնում, միայն նվազագույն սոցիալական ծախսերի ֆինանսական բեռը գնահատվում է շուրջ 36.3 մլն դրամ (92 հազար ԱՄՆ դոլար), իսկ շրջափակման ողջ ընթացքում (80 օրերի հաշվարկով)՝ շուրջ 2.9 մլրդ դրամ (7.3 մլն ԱՄՆ դոլար): Մնացած ծախսերը ենթակա են հետագա գնահատման՝ ելնելով համապատասխան միջոցառումների վերաբերյալ որոշումների կայացումից:

Այսպիսով, Արցախի պետական բյուջեի ընդհանուր ուղղակի ծանրաբեռնվածությունը օրական կտրվածքով նվազագույնը մոտ 117.2 մլն դրամ է (296 հազ. ԱՄՆ դոլար), կամ ամբողջ բյուջետային ծախսերի 20 տոկոսը: Այս կապակցությամբ Արցախի կառավարությունը ստիպված է կրճատել բյուջետային, առաջին հերթին՝ տնտեսական բնույթի կապիտալ և ընթացիկ ծախսերը, ավելի խորացնելով անկումը Արցախի տնտեսության համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՆԱ-ի կորուստների, սոցիալական լրացուցիչ ծախսերի և բյուջեի հարկերի կորուստների գնահատականները թույլ են տալիս համապարփակ պատկերացում կազմել շրջափակման սոցիալ-տնտեսական հետևանքների և ստեղծված ճգնաժամի պայմաններում ֆինանսական կորուստների վերաբերյալ: Մասնավորապես, կախված նրանից, թե սոցիալական քաղաքականության ինչպիսի թիրախ կընտրվի (նվազագույն կենսապայմանների, թե նորմալ կենսապայմանների ապահովում) **Արցախի կորուստները գնահատվում են օրական առնվազն 651-752 մլն դրամ (1.65-1.9 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում, որքան երկար տևի շրջափակումը, այնքան նշյալ ցուցանիշները դառնալու են ավելի օպտիմիստական գնահատականներ, քանի որ յուրաքանչյուր ավել օր շրջափակումը լրացուցիչ վնասում է Արցախի տնտեսական պոտենցիալին՝ հետևապես և նշյալ գնահատված ծախսերին և դրանց մուլտիպլիկատիվ էֆեկտներին ավելանում է ՀՆԱ պոտենցիալի վերականգման ծախսեր[21]:**

Աղյուսակ 2: Արցախի ֆինանսատնտեսական կորուստները

Մոտեցում	Մեկ օրացույցային օրվա հաշվարկով, մլն դրամ (մեկ անձին 68 հազ. աջակցությամբ)	Մեկ օրացույցային օրվա հաշվարկով, մլն դրամ (մեկ անձին 256 հազ. աջակցությամբ)
1. Ամսեկան ՀՆԱ ճեղքի գնահատում	612	706
2. ՀՆԱ ճեղքի գնահատումն ըստ ճյուղային կառուցվածքի	692	798
3. ՀՆԱ ճեղքի գնահատում՝ Միկրոտվյալներից Մակրոտվյալների անցմամբ	544	627
4. ՀՆԱ ճեղքի գնահատում էկոնոմետրիկ մոդելներով	684	790
Միջին, մլն դրամ[22]	**651**	**752**
Միջին, մլն դոլար	**1.65**	**1.9**

[21] Օրինակ եթե կառավարությունը ճանապարհների սպասարկման վրա այսօր անհրաժեշտ ծախս չի անում, վաղը պարտադրված է լինելու խորքապես հիմնանորոգել ճանապարհը, այսինքն վերականգնել փչացած ճանապարհի կենսագործունեությունը:

[22] Քանի որ 1-ին և 2-րդ մոտեցումները ըստ էության հիմնված են դեկտեմբեր ամսվա կորստի գնահատականի վրա, ուստի ընդհանուր միջին ցուցանիշը հաշվարկելիս օգտագործվել է այս երկու մոտեցումների միջինը:

Հավելված. SVAR մոդելի նկարագիրը և արդյունքները

Կառուցվածքային վեկտորական ավտոռեգրեսիվ (SVAR) մոդելի նկարագիրը և կառուցման քայլերը:

Արցախի շրջափակման արդյունքում ՀՆԱ հնարավոր կորստի գնահատման համար կառուցվել է կառուցվածքային վեկտորական ավտոռեգրեսիվ (SVAR) մոդել:

SVAR[23] մոդելը հնարավություն է տալիս մեկ համակարգում/միաժամանակ գնահատել տարբեր ցուցանիշների միջև դինամիկ փոխազդեցությունները, ինչպես նաև կառուցվածքային պարամետրերի օգնությամբ՝ գնահատել փոփոխականների միջև նույն ժամանակահատվածում ազդեցությունները: Մոդելը նաև հնարավորություն է տալիս հաշվի առնել տնտեսագիտության տեսական դրույթներից բխող կամ այլ անհրաժեշտ/հիմնավոր ենթադրություններ:

Կառուցված SVAR մոդելը ունի հետևյալ տեսքը՝

$$BY_t = C + AY_{t-1} + e_t$$

որտեղ $Y_t = [IM_t, EX_t, GDP_t]$ – ներմուծման, արտահանման և ՀՆԱ անվանական աճերի վեկտորն է ժամանակի t պահին: A-ն լագերի ազդեցության պարամետրերի մատրիցն է, C-ն ազատ անդամ պարամետրերի վեկտորը, B-ն կառուցվածքային պարամետրերի մատրիցն է, որը հատկորոշվել է Չոլեսկու կառուցվածքով, e_t-ն մոդելի կառուցվածքային սխալներն/շոկերն են ժամանակի t պահին:

Մոդելը գնահատվել է 2002-2021թթ. տարեկան պարբերականությամբ ժամանակային շարքերի հիման վրա: Օպտիմալ լագի երկարությունը ընտրվել է մեկ:

Մոդելի գնահատումից հետո ստուգվել են փոփոխականների միջև էնդոգեն փոխազդեցությունների նշանակալիությունները և չեզոքացվել են ոչ նշանակալի փոխազդեցությունները: Հաշվի առնելով որ մոդելը գնահատվել է 2002-2021թթ. տարեկան տվյալների հիման վրա, այսինքն՝ ժամանակային շարքերը կազմված են ընդամենը 20 դիտարկումներից, ուստի ոչ նշանակալի փոխազդեցությունների զրոյացումը նվազեցնում է գնահատել պահանջող պարամետրերի քանակը և թույլ տալիս խուսափել «փոքր ազատության աստիճանի խնդրից»:

Մոդելի գնահատումից և որակի/կայունության վերաբերյալ թեստերի ստուգումից հետո իրականացվել են սիմուլյացիաներ՝ ազդակ-արձագանքման ֆունկցիաների օգնությամբ:

Մոդելի գնահատված արդյունքները

Գնահատված[24] SVAR մոդելն ունի հետևյալ մատրիցային տեսքը՝

$$\begin{pmatrix} 1 & 0 & 0 \\ -1.13^{*} & 1 & 0 \\ -0.25^{**} & -0.07^{**} & 1 \end{pmatrix} \begin{pmatrix} IM_t \\ EX_t \\ GDP_t \end{pmatrix} = \begin{pmatrix} 24.9 \\ 46.4 \\ 31.0 \end{pmatrix} + \begin{pmatrix} 0 & 0.07 & 0.82^{***} \\ 0 & 0.58^{***} & 0 \\ 0 & 0 & 0.67^{***} \end{pmatrix} \begin{pmatrix} IM_{t-1} \\ EX_{t-1} \\ GDP_{t-1} \end{pmatrix}$$

Ինչպես տեսնում ենք, գնահատված A-մատրիցում հնարավոր 9 պարամետրերից գնահատվել է ընդամենը 4 պարամետր, մնացած պարամետրերի գնահատումը սահմանափակվել է՝ մեծացնելով

[23] SVAR մոդելների առավել մանրամասը նկարագրությունը տե՛ս Walter Enders, "Applied econometric time series", University of Alabama, Fourth edition, 2015, Chapter 5, pp. 313-335:

[24] *Նշում՝* *** - նշանակալիության մակարդակը (p-value) < 1 %-ից, ** - նշանակալիության մակարդակը (p-value) < 7 %-ից, * - նշանակալիության մակարդակը (p-value) < 12 %-ից:

ազատության աստիճանը: Վերոնշյալ մատրիցային տեսքով SVAR մոդելի արդյունքները կարելի է ներակայացնել հետևյալ հավասարումների համակարգի տեսքով՝

$$\begin{cases} IM_t = 24.9 + 0.07 * EX_{t-1} + 0.82 * GDP_{t-1} & (1) \\ EX_t = 46.4 + 1.13 * IM_t + 0.58 * EX_{t-1} & (2) \\ GDP_t = 31.0 + 0.25 * IM_t + 0.07 * EX_t + 0.67 * GDP_{t-1} & (3) \end{cases}$$

Համակարգի 3-րդ հավասարումը ցույց է տալիս, որ ժամանակի t պահին ՀՆԱ առաձգականությունը արտահանումից 0.07 է, իսկ ներմուծումից՝ 0.25: Սակայն, ինչպես տեսնում ենք 1-ին և 2-րդ հավասարումներից արտահանման և ներմուծման աճերը գտնվում են էնդոգեն փոխկախվածության մեջ: Ուստի վերջիններիս ամբողջական ազդեցությունը ՀՆԱ անվանական աճի վրա հասկանալու համար անհրաժեշտ է կառուցել մոդելի ազդակ-արձագանքման ֆունկցիաները:

Մոդելի ազդակ-արձագանքման ֆունկցիաները

Արտահանման և ներմուծման աճերի 1% շոկի արձագանքը ՀՆԱ աճի վրա (առաձգականության գործակիցներ)





Ինչպես տեսնում ենք, մոդելի ազդակ-արձագանքման ֆունկցիաներից ՀՆԱ առաձգականությունը արտահանումից գնահատվում է 0.11%, իսկ ներմուծումից՝ 0.34%: